Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 23-ի N 243-Ն որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների, դրանց դադարեցման պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը (այսուհետ՝ սահմանափակումների փաստաթղթեր), բացառությամբ պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի, մուտքագրվում են անշարժ գույքի պետական ռեգիստրի կողմից ներդրված համապատասխան էլեկտրոնային համակարգում (այսուհետ՝ համակարգ)։ Սահմանափակումների փաստաթղթերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային՝ ՓիԴիԷՖ (PDF) ձևաչափով, հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ տրամադրված՝ համակարգերի փոխգործելիության միջոցով։

2. Սահմանափակումների փաստաթղթերի ներկայացման, համակարգի առանձին տիրույթի օգտագործողների, վերջիններիս՝ համակարգում գրանցման ընթացակարգերի նկատմամբ տարածվում են N 1 հավելվածի 2-13-րդ կետերի պահանջները։

3. Սահմանափակում կիրառելու իրավասություն ունեցող անձը սույն կարգի իմաստով համարվում է սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձ, որը համակարգում գրանցվում է սույն որոշման N 1 հավելվածի 2-13-րդ կետերով նախատեսված ընթացակարգով։

4. Սահմանափակումների փաստաթղթերը համակարգ վերբեռնելուց առաջ մուտքագրողը համակարգի՝ համապատասխան առանձնացված տիրույթում նախապես լրացնում է՝

1) ըստ սահմանափակվող իրավունքի սուբյեկտի սահմանափակում կիրառելու դեպքում՝

ա. սահմանափակումների փաստաթղթի տեսակը, համարը (առկայության դեպքում) և ամսաթիվը,

բ. սահմանափակումը կիրառող մարմինը, դրա կառուցվածքային միավորը և պաշտոնատար անձը,

գ. դատական գործի համարը, կատարողական վարույթի համարը, իսկ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում կիրառվող սահմանափակումների դեպքում՝ քրեական վարույթի համարը,

դ. սահմանափակվող իրավունքի տեսակը և սահմանափակվող իրավունքի բնույթը,

ե. անձի անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), ծննդյան ամսաթիվը և քաղաքացիությունը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ լրիվ անվանումը, գտնվելու վայրը և կազմակերպաիրավական ձևը,

զ. հանրային ծառայության համարանիշը, ինչպես նաև անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը կամ գրանցման համարը.

2) կոնկրետ անշարժ գույքի միավորի նկատմամբ իրավունքների սահմանափակում կիրառելու դեպքում՝ սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի «ա»-«զ» պարբերություններով նախատեսված տվյալները, ինչպես նաև՝

ա. անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի համարը (առկայության դեպքում),

բ. անշարժ գույքի միավորի հասցեն (առկայության դեպքում),

գ. անշարժ գույքի միավորի կադաստրային ծածկագիրը:

5. Սույն հավելվածի 4-րդ կետով նախատեսված տվյալները լրացնելուց և փաստաթղթերը վերբեռնելուց հետո սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը ստուգում և հաստատում է մուտքագրումը: Մինչև սահմանափակումների փաստաթղթերի մուտքագրման հաստատումը սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը հնարավորություն ունի խմբագրելու համակարգում իր կողմից լրացված սույն հավելվածի 4-րդ կետով նախատեսված տվյալները:

6. Մինչև սահմանափակումների փաստաթղթերի ձևավորումը և դրանք համակարգ վերբեռնելը, ինչպես նաև այդ գործընթացից հետո սահմանափակումների փաստաթղթեր մուտքագրող անձինք իրավունքի սուբյեկտի և (կամ) նրան պատկանող գույքի վերաբերյալ տվյալները ձեռք բերելու համար համակարգի միջոցով կարող են ստանալ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների սահմանափակումների մասին տեղեկատվություն, անշարժ գույքի միավորի կադաստրային գործում պահվող փաստաթղթերի էլեկտրոնային պատճեններ և այլ տեղեկատվություն: Այն դեպքում, երբ սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձի կողմից մուտքագրված տվյալների հիման վրա անշարժ գույք չի հայտնաբերվում, ապա սույն դեպքում համակարգի միջոցով սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը տեղեկացվում է:

7. Սույն հավելվածի 6-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը ստանալու համար սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը համակարգի առանձնացված տիրույթում լրացնում է՝

1) տեղեկատվությունը պահանջող մարմինը, դրա կառուցվածքային միավորը և պաշտոնատար անձը.

2) դատական գործի համարը կամ կատարողական վարույթի համարը, իսկ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում կիրառվող սահմանափակումների դեպքում՝ քրեական վարույթի համարը.

3) հայցվող տեղեկատվության սուբյեկտ հանդիսացող անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ լրիվ անվանումը.

4) հանրային ծառայության համարանիշը, ինչպես նաև անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը կամ գրանցման համարը.

5) անշարժ գույքի միավորի հասցեն (առկայության դեպքում).

6) անշարժ գույքի միավորի կադաստրային ծածկագիրը.

7) անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի համարը (առկայության դեպքում).

8) հայցվող տեղեկատվության բնույթը:

8. Սույն հավելվածով սահմանված սահմանափակման (սահմանափակումների) գրանցմանը, ինչպես նաև սույն հավելվածի 7-րդ կետով հարցմանն ի պատասխան տրամադրվում է անշարժ գույքի միավորի նկատմամբ կիրառված սահմանափակման (սահմանափակումների) վերաբերյալ հաղորդագրություն, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) անշարժ գույքի միավորի հասցեն (առկայության դեպքում).

2) անշարժ գույքի միավորի նկարագրությունը.

3) կադաստրային գործի ծածկագիրը.

4) իրավունքների պետական գրանցման միասնական մատյանի համարը (առկայության դեպքում).

5) իրավունքների պետական գրանցման միասնական մատյանի թերթիկի համարը (առկայության դեպքում).

6) հողամասի ծածկագիրը, մակերեսը՝ արտահայտված հեկտարով (հա), նպատակային և գործառնական նշանակությունները.

7) շենքի կամ շինության ծածկագիրը (ծածկագրերը), մակերեսները՝ արտահայտված քառակուսի մետրերով (քմ).

8) անշարժ գույքի միավորի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը.

9) միասնական տարածագնահատման գոտին:

9. Անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցված իրավունքների սուբյեկտների վերաբերյալ տրամադրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) իրավունքի տեսակը.

2) իրավունքի կարգավիճակը (գործող, դադարած).

3) գրանցման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը.

4) սուբյեկտը՝

ա. իրավաբանական անձանց դեպքում՝ լրիվ անվանումը, գրանցման համարը կամ հարկ վճարողի հաշվառման համարը, կազմակերպաիրավական ձևը,

բ. ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), հանրային ծառայության համարանիշը, անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը:

10. Անշարժ գույքի պետական ռեգիստրում գրանցված իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տրամադրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) սահմանափակման տեսակը.

2) նկարագրությունը.

3) սահմանափակման լրացման ամսաթիվը.

4) սահմանափակման կիրառման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի՝

ա. անվանումը,

բ. ընդունող մարմինը և պաշտոնատար անձը,

գ. փաստաթղթի ամիսը, ամսաթիվը և տարեթիվը,

դ. համարը,

ե. կարգավիճակը՝ գործող կամ դադարած,

զ. լրացուցիչ նշումներ:

11. Անշարժ գույքի միավորի կադաստրային գործի փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները սույն հավելվածի 7-րդ կետով ներկայացված հարցման հիման վրա արտածվում են սահմանափակումների փաստաթղթերը մուտքագրող անձի՝ համակարգի առանձնացված տիրույթի իր էջում:

12. Սահմանափակումների փաստաթղթերը սույն հավելվածին համապատասխան համակարգ ներբեռնելուց հետո սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը կարող է դիտել մուտքագրված փաստաթղթերը, դրանց հիման վրա գրանցված սահմանափակումների ցանկը:

13. Սահմանափակումները վերացնելու համար սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը համակարգի առանձնացված տիրույթում ընտրում է այն անշարժ գույքի միավորները, որոնց նկատմամբ գրանցված է իրավունքի սահմանափակում: Այնուհետև սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը համակարգի առանձնացված տիրույթում լրացնում է՝

1) սահմանափակումները դադարեցնող փաստաթղթի տեսակը, համարը (առկայության դեպքում) և ամսաթիվը.

2) սահմանափակումը վերացնող մարմինը, դրա կառուցվածքային միավորը և պաշտոնատար անձը.

3) դատական գործի համարը կամ կատարողական վարույթի համարը, իսկ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում կիրառվող սահմանափակումների դեպքում՝ քրեական վարույթի համարը.

4) սահմանափակվող իրավունքի տեսակը և սահմանափակվող իրավունքի բնույթը:

Սույն հավելվածի 13-րդ կետում նշված գործողություններից հետո սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը համակարգ է ներբեռնում սահմանափակումը դադարեցնելու մասին փաստաթուղթը և հաստատում է մուտքագրված տվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ